ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԻՋԵՎ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն (այսուհետ՝ ՔԿ) և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնը (այսուհետ՝ ՖԴԿ)

գիտակցելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի ոլորտում փոխադարձ համագործակցության անհրաժեշտությունը,

նպատակ ունենալով ապահովել ՓԼ/ԱՖ հնարավոր դեպքերի կանխարգելման և բացահայտման արդյունավետ մեխանիզմների ներդրումը,

հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը

կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Ընդհանուր դրույթներ

1.1. ՔԿ-ն և ՖԴԿ-ն (այսուհետ նաև՝ Կողմեր) համաձայնվում են համագործակցել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված խնդիրների և լիազորությունների իրականացման նպատակով:

2. Համագործակցության ոլորտները

2.1. Կողմերի միջև համագործակցության ոլորտներն են.

ա) ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող օպերատիվ տեղեկատվության փոխանակումը,

բ) Զանգվածային ոչնչացման զենքի (այսուհետ՝ ՋՈՋ) տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում փոխօգնություն,

գ) ՓԼ/ԱՖ հնարավոր դեպքերի կամ վարկածների, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի իրավական ակտերի և փաստաթղթերի կապակցությամբ համատեղ քննարկումների անցկացումը,

դ) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կանոնակարգերի, ուղեցույցերի և այլ մեթոդական նյութերի, ինչպես նաև ռազմավարական վերլուծությունների, քաղաքականությունների մշակման գործում փոխօգնությունը,

ե) ՓԼ/ԱՖ վերաբերյալ գործերով վիճակագրության վարման և տիպաբանությունների կազմման հարցերով համատեղ գործունեությունը,

զ) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ուսուցման, վերապատրաստման և խորհրդատվության համատեղ ծրագրերի իրականացումը:

3. Համագործակցությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող օպերատիվ տեղեկատվության փոխանակման ոլորտում

3.1. ՖԴԿ-ն ֆինանսական վերլուծության արդյունքում ՓԼ/ԱՖ այնպիսի հատկանիշներ հայտնաբերելու դեպքում, որոնց նախաքննության իրավասությունը վերապահված է ՔԿ-ին, այդ մասին ծանուցում է ներկայացնում ՔԿ՝ պատճենն ուղարկելով ՀՀ դատախազություն:

3.2. Կողմերը համաձայնվում են գրավոր հարցումների հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ փոխանակել իրենց տրամադրության տակ առկա, այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք հանդիսացող տեղեկություններ, եթե հարցումը պարունակում է բավարար հիմնավորում ՓԼ/ԱՖ հնարավոր դեպքի կամ վարկածի վերաբերյալ: Նշված տեղեկատվությունը Կողմերը փոխադարձաբար տրամադրում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

3.3. ՖԴԿ-ն համաձայնվում է որևէ անձի բանկային հաշվի, գործառնության, ինչպես նաև բանկային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկատվություն տրամադրել ՔԿ-ին, եթե հարցումը հիմնավորված է ՓԼ/ԱՖ հնարավոր դեպքի կամ վարկածի հանգամանքներով:

3.4. ՔԿ-ն համաձայնվում է նախաքննության գաղտնիք պարունակող տեղեկատվություն տրամադրել ՖԴԿ-ին, եթե հարցումը հիմնավորված է ՓԼ/ԱՖ կամ նախորդող հանցակազմի հատկանիշների վերաբերյալ վերլուծություն իրականացնելու նպատակով:

3.5. ՔԿ-ն համաձայնվում է ՖԴԿ-ի կողմից տրամադրված ծանուցումները և այլ տեղեկությունները, որպես ապացույց օգտագործել կամ կցել քրեական գործին միայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասով սահմանված կարգով ձեռք բերելուց հետո:

3.6. Կողմերը համաձայնվում են առանց տեղեկատվությունը տրամադրած Կողմի համաձայնության, այդ տեղեկատվությունը չօգտագործել այլ նպատակներով, քան սույն համաձայնագրով նշված նպատակներն են:

3.7. Կողմերը համաձայնվում են առանց տեղեկատվությունը տրամադրող Կողմի համաձայնության, տրամադրվող տեղեկատվությունը չհրապարակել կամ չներկայացնել որևէ երրորդ անձի, բացառությամբ քրեական հետապնդման մարմինների:

3.8. Կողմերը համաձայնվում են միջազգային հարցումների հիման վրա ստացված տեղեկատվությունը մյուս Կողմին տրամադրել միայն արտասահմանյան կողմի համաձայնության դեպքում:

3.9. Կողմերը համաձայնվում են տեղեկությունը տրամադրած Կողմին ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում տեղեկացնել այդ տեղեկությունների ՓԼ/ԱՖ կասկածելի գործարքի վերլուծության կամ քրեական գործի հարուցման և քննության առնչությամբ օգտագործելու արդյունքների մասին:

3.10. ՓԼ/ԱՖ հնարավոր դեպքերի կամ վարկածների վերաբերյալ ծառայողական և մասնագիտական տեղեկությունների կամ խորհրդատվության փոխանակումն իրականացվում է Կողմերի միջև տեղեկատվության պաշտոնական փոխանակման միջոցով:

4. <u>Համագործակցությունը ՀՈՀ տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում</u>

4.1. Կողմերը համաձայնվում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությամբ սահմանված խնդիրների և նպատակների իրականացման համար համագործակցել նաև ՀՈՀ տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում սույն համաձայնագրի 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով սահմանված կարգով:

5. *Համագործակցությունը ՓԼ/ԱՖ հնարավոր դեպքերի կամ վարկածների, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի իրավական ակտերի և փաստաթղթերի կապակցությամբ համատեղ քննարկումների ոլորտում*

5.1. Կողմերը համաձայնվում են կազմակերպել երկկողմ կամ բազմակողմ քննարկումներ հետևյալ հարցերի կապակցությամբ.

ա) ՓԼ հնարավոր դեպքերի կամ վարկածների կապակցությամբ քննարկումների անցկացում՝ Կողմերից մեկի նախաձեռնությանը հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում,

բ) ԱՖ հնարավոր դեպքերի կամ վարկածների կապակցությամբ քննարկումների անցկացում՝ պնհապաղ, ոչ ուշ, քան Կողմերից մեկի նախաձեռնությանը հաջորդող 1 աշխատանքային օրվա ընթացքում,

գ) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի իրավական ակտերի և փաստաթղթերի կապակցությամբ քննարկումների անցկացում՝ Կողմերից մեկի նախաձեռնությանը հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:

5.2. ՓԼ/ԱՖ հնարավոր դեպքերի կամ վարկածների վերաբերյալ քննարկումներին երրորդ անձինք կարող են հրավիրվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

5.3. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի իրավական ակտերի և փաստաթղթերի կապակցությամբ քննարկումներին Կողմերի նախաձեռնությամբ կարող են հրավիրվել այլ գերատեսչությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև այլ շահագրգիռ անձինք:

6. *ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական բարեփոխումների, կանոնակարգերի, ուղեցույցերի և այլ մեթոդական նյութերի, ինչպես նաև ռազմավարական վերլուծությունների, քաղաքականությունների մշակման ոլորտում փոխօգնությունը*

6.1. Կողմերը համաձայնվում են համապատասխան հարցման դեպքում մասնագիտական եզրակացություն տրամադրել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներկայացված կանոնակարգերի, ուղեցույցերի, այլ մեթոդական նյութերի, ռազմավարական վերլուծությունների, քաղաքականությունների նախագծերին, ինչպես նաև մասնակցել նշված փաստաթղթերի մշակմանը:

7. *ՓԼ/ԱՖ վերաբերյալ գործերով վիճակագրության վարման և տիպաբանությունների կազմման հարցերով համատեղ գործունեությունը*

7.1. Կողմերը համաձայնվում են վարել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ձեռնարկված միջոցների և արձանագրված արդյունքների վիճակագրություն՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

7.2. Համատեղ գործունեության ամփոփման արդյունքներով ՖԴԿ-ն և ՔԿ-ն կարող են կազմել և հրապարակել ՓԼ/ԱՖ տիպաբանություններ:

8. *ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ուսուցման, վերապատրաստման և խորհրդատվության համատեղ ծրագրերի իրականացումը*

8.1. ՔԿ-ն և ՖԴԿ-ն համաձայնվում են.

ա) Կողմերից մեկի խնդրարկած ժամանակահատվածում և թեմաներով համաձայնագրի մյուս կողմի համապատասխան աշխատակիցների համար իրականացնել ուսուցման, վերապատրաստման և խորհրդատվության ծրագրեր,

բ) Ըստ անհրաժեշտության, համատեղ նախապատրաստել և ներդնել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հանրային իրազեկությանը միտված ուսուցողական և այլ բնույթի ծրագրեր:

9. <u>Եզրափակիչ դրույթներ</u>

9.1. Սույն համաձայնագիրը գործում է ստորագրման պահից:

9.2. Սույն համաձայնագիրը ստորագրվում է երկու հավասարազոր բնօրինակից՝ յուրաքանչյուրը չորս թերթից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

9.3. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ գործողությունը դադարել Կողմերի գրավոր համաձայնության հիման վրա:

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահ	**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավար**
Աղվան Հովսեփյան	**Դանիել Ազատյան**
----------	----------
ստորագրման ամսաթիվը 16.11.16թ	ստորագրման ամսաթիվը 10.11.2016թ.